ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» նոյեմբերի 2024թ. № 1071

ՍՈՒՍԱՆ ՌՈԲԵՐՏԻ ՄԱԹՈՍՅԱՆԻ՝ «ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ» ԱՆՎԱՆՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի բնակիչ Սուսան Ռոբերտի Մաթոսյանը 2024 թվականի հոկտեմբերի 14-ին ներկայացրել է վարչական բողոք, որով խնդրել է կատարել կադաստրային քարտեզում առկա սխալի ուղղում ճշգրտված կոորդինատների համապատասխան կամ դրան ուղղված իրավական գործողություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

Սուսան Ռոբերտի Մաթոսյանի վարչական բողոքի պահանջի վերլուծությունից հետևում է, որ դրանով չի բողոքարկվում Սպիտակ համայնքի ղեկավարի վարչական ակտ կամ գործողություն (անգործություն), ուստի անհրաժեշտ է այն քննարկել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ բաժնի դրույթներին համապատասխան, այլ 2-րդ բաժնի դրույթներին համապատասխան, և այն դիտարկել որպես դիմում, թեև այն վերնագրված է «վարչական բողոք»:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև Սուսան Ռոբերտի Մաթոսյանի վկայակոչած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698 որոշմամբ համայնքի ղեկավարը կադաստրային քարտեզում առկա սխալի ուղղում կատարելու լիազորություն չունի, իսկ ինչ վերաբերում է սխալի ուղղման ուղղված իրավական գործողություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ վարչական բողոքին կցված չափագրման հաշվետվությամբ ներկայացված հողամասի հատակագիծը Սպիտակի համայնքապետարանում առկա կադաստրային քարտեզի վրա տեղադրելիս առաջանում է համադրում 06-006-0501-0022 և 06-006-0501-0024 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ, չափագրման հաշվետվությամբ հողամասի գործառնական նշանակությունը նշված է «բնակելի կառուցապատման», մինչդեռ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25022022-06-0073 վկայականում հողամասի գործառնական նշանակությունը նշված է «հասարակական կառուցապատման»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ, 55-րդ 56-րդ և 57-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ***.

1. Սուսան Ռոբերտի Մաթոսյանի՝ «վարչական բողոք» անվանված 2024 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում հանձնել Սուսան Ռոբերտի Մաթոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսան Ռոբերտի Մաթոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 5
ք. Սպիտակ